ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 14

<30> 01 2018թ.

ք. Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 95 և 96 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.39, 1.41, 1.46, 1.32 կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018թ. հունվարի 19-ի թիվ 15-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրով

Որոշում եմ՝

1. 2018 թվականի 1-ին եռամսյակում մարզի Ազատաշեն,Գետափնյա, Նոր կյանք, Նորաբաց համայնքներում իրականացնել իրավական և մասնագիտական հսկողություն:

2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հունվարի 19-ի թիվ 15-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրով:

3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

1) համայնքի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին հսկողությունն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ գրությամբ պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով ,կամ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով) տեղեկացնել հսկողության իրավական հիմքի , հսկողություն իրականացնող համապատասխան աշխատանքային խմբի , պաշտոնատար անձանց կազմի , բնագավառների , նպատակի, ժամկետների մասին:

2) Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո, սահմանված ժամկետում , հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն :

3) Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման արդյունքում կազմված արձանագրությունը, խախտումները վերացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարին ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև հսկողության վերաբերյալ համայնքի ղեկավարի ներկայացրած առարկությունները սահմանված ժամկետում հրապարակել մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում :

4) 2018 թվականի իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային ծրագիրը եռօրյա ժամկետում տեղադրել մարզպետարանի պաշտոնական կայքում :

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ